ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» հունիսի 2021թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Արմինե Ալիխանյան՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

Հայկ Սարգսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.

Սմարթլայն ՍՊԸ-ի, ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ի, ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

2.2 **Սմարթլայն ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

-Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար,

-էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական, միաժամանակ ռուսերեն լեզվով նշված մասնակցի անվանումը չի համապատասխանում մասնակցի՝ հայերեն լեզվով նշված անվանմանը,

2.3 **ՕՊՏՇԻՆ ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

-Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

-էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը նշված չէ (նշված է մասնակցի հայերեն անվանումը):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. հունիսի 30-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 29-ը ներառյալ** համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Արմինե Ալիխանյան

Հայկ Սարգսյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան